

Ա. ղ օ թ ֆ

Եթէ միայն քեզի դպչի՛լ կարենայի,
Անլոյ՛ս երագ իմ հոգիիս կամարին տակ,
Եթէ միայն աչքերուդ բոցն համբուրէի՛,
Պիտի ծաղկէ՛ր գուցէ նամբան իմ ըսպիտակ...

Ու ճայներուն խորհուրդը քաղցրը պիտ' ըլլար,
Ու դէմքերու երեսոյթին մէջ անապակ
Թերեւըս գիծ մ'անհունօրէն լուսատիպար
Առաջնորդէր սիրտըս յոյսի մը ժպտունակ...

Եթէ միայն քեզի հծծե՛լ կարենայի
Սրտամբմունջ աղօթք մը ջինջ ու սխրալի,
Եթէ միայն դուն գտնէի՛ր խորն աչքերուս

Քու տեսիլքդ ինկած վարդի մը շափիւղան,
Ի՛նչ կամարով պիտի բացուէր աստեղալոյս
Դուրը ցնորքին ուր կը սպասէ՛ր այս որբ տըղան...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ